

Մառնաղբյուր

Վարչական դեկավար՝ Գևորգ Աճեմյան

Հեռ 098 55 45 99

Մակերես՝ 64.87կմ²

Բնակչություն՝ 3298

sarnaghbyur.shirak@mta.gov.am

Համայնքի ներկայիս անվանումը – Մառնաղբյուր
Համայնքի պատմական անվանումները- Ուրեղնուտ, Սոգյուլի
Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը – 1829-1830թ.թ. Արևմտյան Հայաստանից
գաղթած ընտանիքների կողմից:
Որ համայնքներին է սահմանակից համայնքը – Լանջիկ, Ձորակապ, Լեռնակերտ,
Գառնահովիտ
Համայնքի մակերեսը - 6487.9 հեկտար
Հեռավորությունը մայրաքաղաքից - 100կմ
Հեռավորությունը մարզկենտրոնից - 35 կմ
Բնակչության թիվը - 3401 մարդ
Բնակչության կազմը - հայեր-3398մարդ
այլ /մոլդովացի / - 3

Կրթական հաստատություններ – <<Մառնաղբյուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
<<Մառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական
հաստատություն>> ՀՈԱԿ

Մշակութային հաստատություններ - Մառնաղբյուրի մշակութի տուն/ վերակառուցման
ենթակա/

Համայնքի մասին գրքի առկայություն – Ռ.Գևորգյան <<Ակունք>>

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ – Գյուղում կա նաև հնավայր, Կալաչի կամ Ղալաչի կոչվող բլրի վրա առկա են
բազմաթիվ վկայություններ հնավայրի գոյությունը ապացուցող, սակայն առայժմ այն ոչ մի
հնագիտական ուսումնասիրությունների չի ենթարկվել: Գյուղի անվանացանկում կարելի է թվարկել
նաև Գյոդիքենդի և Սյոգուլի կամ Սոգբլու անունները, որոնք տրվել են թուրքերի
կողմից 1918 թվականի մայիսյան հերոսամարտերի ժամանակ, ի դեպ պետք է փաստել, որ գյուղը
բավականին լուրջ դիմադրություն է ցույց տվել թուրքական ջարդարարներին 1918 թվականի մայիսի
18-23 կամ 24-ը ընկած ժամանակահատվածում: Այս դեպքերի վերաբերյալ կան բազմաթիվ
վկայություններ: Գյուղը բավականին մեծ տարածք ունի:

Մառնաղբյուր գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի հարավ-
արևելյան մասում, ծովի մակարդակից մոտ 2000մ բարձրության վրա. Գյուղը ունի մի շարք
պատմական կոթողներ, որոնք հավանաբար վկայում են, որ գյուղի տարածքը նախկինում բնակեցված
է եղել:

Գյուղի կենտրոնում են գտնվում սուրբ Թադևոս (1883 թ.), սուրբ Հակոբ (V-VI դարեր) և Սուրբ
Կարապետ (1205 թ.) եկեղեցիները: Գյուղի մոտ են գտնվում V-XIII դարերի Հոգեվանքը, Սուրբ Գրիգոր
Լուսավորիչ ուխտատեղին, իսկ 6 կմ արևելք՝ Սուրբ Ղազար եկեղեցին (V-VI դարեր), «Գնդաքար»

(մ.թ.ա. 1-ին հազարամյակ) և «Բերդիկ» (մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակ) ամրոցները: [1883](#) թվականին կառուցվել է Թադևոս Առաքյալ եկեղեցին, որը այժմ գործող է:

Մառնադրյուրում են գտնվում մի շարք սառնորակ աղբյուրներ: Դրանցից հիշարժան են «Կաթնով աղբյուր», «Թմոյի աղբյուր», «Ձորի Աղբյուր», «Կանալ», «Բողի աղբյուր» և այլ աղբյուրները:

Մառնադրյուրում գտնվում է նաև քարհանք, որտեղ կա վարդագույն [տուֆ](#) և [ավազի](#) հանք «Բողթլու» անունով: Տարածքում կան տուֆի և [պեմզայի](#) հարուստ պաշարներ:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

Գյուղն ունի [արհեստական ջրամբար](#), որը ոռոգում է Անիի տարածքի

1000 [հեկտար](#) հողատարածությունը:

- [Հայկարամ Մխիթարյան](#), Նախկին ԱԺ պատգամավոր, «Հայմամուլ» ՓԲԸ գլխավոր տնօրեն, ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարիչ, ՀՀ նախագահի աշխատակազմի գործերի կառավարիչ, ներկայումս՝ ՀՀ ԱԻՆ փոխնախարար
- [Արշալույս Սարոյան](#)
- [Գուրգեն Սահակյան](#)
- Սամվել Նիկոյան (ծ. 1958), ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահ, քաղաքական գործիչ: